

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ՏՀՆՆ-ՇՀԾՁԲ-15/3-17-04 - 14-17

ք. Երևան

<<27>> 03 2017թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Շահնազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Նիկողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### **2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### **2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **3 892 600** (երեք միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 50 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Պ ա տ վ ի թ ա տ ու

Կ ա տ ա թ ո ղ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5

Հ/Հ՝ 900011010312, 900011010320, 900011004711

ՀՀ ՖՆ աշխատանքային գործառնական վարչություն  
ՀՎՀՀ՝ 02505983

Ա. Շահնազարյան



«Գարանտսերվիս» ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20

«Կոնվերսանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 193004674290

ՀՎՀՀ՝ 00840437

*Մ. Նիկողոսյան*  
Մ. Նիկողոսյան  
(տնտեսագրություն)



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ  
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների**

**Ձեռքբերվող Ծառայության նկարագիր**

Հ/հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափման միավոր	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների
			1-ին չափաբաժին 4x4 տիպի (ՎԱԶ 21214 Նիվա) մակնիշի ա/մ
			Գնացուցակ
1	2	3	4
SU-1 ներառվող ծառայությունների անվանում			
1	Բոնկման համակարգի ստուգում	դրամ	0
2	Սառեցման համակարգի ստուգում		0
3	Յուղման համակարգի ստուգում		0
4	Արտացման համակարգի ստուգում		0
5	Կցորդման համակարգի ստուգում		0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում		0
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում		0
8	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում		0
9	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում		0
10	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում		0
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում		0
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում		5000
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում		5000
14	Թափքի վիճակի ստուգում		0
15	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում		0
SU-2 ներառվող ծառայությունների անվանում			
16	Շարժիչի հանում և տեղադրում	դրամ	15000
17	Շարժիչի վերանորոգում		40000
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում		2000
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում		100
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում		18000
21	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում		100
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում		15000
23	Փականի խցուկի փոխարինում		10000
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում		100
25	Նույնը DOHC դեպքում		100
26	Հրիչների փոխարինում SOHC		100
27	Նույնը DOHC դեպքում		100
28	Ատամնավոր փոկի փոխարինում		100
29	Նույնը DOHC դեպքում		100
30	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում		5000
31	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում		100
32	Մխոցային օդակների փոխարինում		100
33	Նույնը DOHC դեպքում		100

34	Թափանիվի հանում և տեղադրում		100
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>			
35	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	դրամ	2000
36	Յուղի պոմպի փոխարինում		100
37	Ղեկավարման բյուրի վերանորոգում		15000
38	Բռնկման կարգավորում		3000
39	CO կարգավորում		100
40	խարնարակի հանում և տեղադրում		100
41	խարնարակի վերանորոգում		100
42	Օդի գտիչի փոխարինում		500
43	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում		1000
44	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում		5000
45	Բենզամղիչի փոխարինում		5000
46	Վառելիքի գտիչի փոխարինում	5000	
47	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	8000	
48	Տրամյորի հանում և տեղադրում	1000	
49	Տրամյորի վերանորոգում	1000	
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>			
50	Հովհարի փոկի հանում և տեղադրում	դրամ	2000
51	Հովհարի հանում և տեղադրում		3000
52	Ռադիատորի հանում և տեղադրում		8000
53	Նույնը կոնդիցիոների դեպքում		0
54	Ռադիատորի վերանորոգում		20000
55	Թերմոստատի փոխարինում		3000
56	Ջրի պոմպի փոխարինում		6000
57	Ջրի պոմպի վերանորոգում		3000
58	Նույնը DOHC դեպքում		0
59	Նույնը կոնդիցիոների դեպքում		0
60	Ընդարձակող բաքի փոխարինում		500
61	Խլարարի հանում և տեղադրում		4000
62	Նույնը DOHC դեպքում		0
63	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում		1000
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>			
64	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	դրամ	2000
65	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում		1000
66	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում		1000
67	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում		1000
68	ՓՏ-ի հանում և տեղադրում		8000
69	ՓՏ-ի վերանորոգում		20000
70	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում		100
71	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում		100
72	Վազքաչափի շարժաբերի փոխարինում		100
<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>			
73	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	դրամ	5000
74	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով		15000
75	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում		2000
76	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում		3000
77	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.		3000
78	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում		3000
79	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	3000	
<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>			
80	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	դրամ	15000
81	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում		15000
82	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում		10000
83	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.		3000
84	Կիսաստնու առանցքակալի փոխարինում		100
<b>7. Կախոց</b>			
85	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	դրամ	5000
86	Տրավերսի հանում և տեղադրում		100
87	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում		5000
88	Անվակունդի առանցքակալի փոխարինում		5000
89	Նույնը հետին տանող ա/մ-երի համար		100

90	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում		5000
91	Ձախ կամ աջ հողակալալի խցուկների փոխարինում		100
92	Ձախ կամ աջ հողակալալի առանցքակալների փոխարինում		100
93	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում		0
94	Չսպանակի հանում և տեղադրում		3000
95	Չսպակի հանում և տեղադրում		0
96	Չսպակի վռանների փոխարինում		0
97	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		2000
98	Ներքևի լծակի հանում և տեղադրում		4000
99	Ներքևի լծակի վռանների փոխարինում		1000
100	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում		3000
101	Միջին ձգանի հանում և տեղադրում	դրամ	3000
102	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում		1000
103	Վերևի լծակի հանում և տեղադրում		3000
104	Վերևի լծակի վռանների փոխարինում		1000
105	Գնդե հողակալների փոխարինում		3000
106	Ծայրակալների հանում և տեղադրում		2000
107	Առջևի կայունարարի հանում և տեղադրում		100
108	Առջևի կայունարարի վռանների փոխարինում		3000
109	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում		100
110	Հետևի զսպանակի փոխարինում		2000
111	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		2000
112	Հետևի ձգածողի հանում և տեղադրում		100
113	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում		2000
114	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում		1000
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>			
115	Ղեկային կայունի հանում և տեղադրում	դրամ	8000
116	Ղեկային կայունի վերանորոգում		100
117	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում		100
118	ՂԿ-ի հողակալների հանում և տեղադրում		100
<b>9. Արգելակային համակարգ</b>			
119	Գլխ. գլանի հանում և տեղադրում	դրամ	2000
120	Գլխ. գլանի վերանորոգում		2000
121	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում		5000
122	Բանվ. գլանի հանում և տեղադրում		2000
123	Բանվ. գլանի վերանորոգում		1000
124	Արգելակային համակարգի օդահանում		1000
125	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում		2000
126	Առջևի սուպպորտի վերանորոգում		2000
127	Արգելակային փողրակի փոխարինում		2000
128	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում		2000
129	Հետևի կոճղակների փոխարինում		3000
130	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում		3000
131	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում		3000
132	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում		100
133	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում		3000
134	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում		3000
<b>10. Էլեկտրասարքավորում</b>			
135	Էլեկտրասարքավորման վերանորոգում		15000
136	Չափիչ սարքերի հանում և տեղադրում		2000
137	Գններատորի հանում և տեղադրում		3000
138	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում		0
139	Գններատորի վերանորոգում		3000
140	Մեկնարկիչի հանում և տեղադրում		3000
141	Մեկնարկիչի վերանորոգում		3000
142	Առջևի լապտերի հանում և տեղադրում		2000
143	Հետևի լապտերի հանում և տեղադրում		2000
144	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում		5000
145	Վազքաչափի հանում և տեղադրում		100
146	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում		1000
147	Սաքերի պանելի հանում և տեղադրում		15000
148	Արագաչափի հանում և տեղադրում		3000

149	Ազդանշանի հանում և տեղադրում		3000
150	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում		1000
151	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում		5000
152	Ազդանշանային համակարգի տեղադրում		15000
153	Մագնիստայի տեղադրում		100
154	Վառոցքային լարերի հանում և տեղադրում		1000
155	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	դրամ	15000
156	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում		100
157	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում		100
158	Էլեկտրական սվիչների փոխարինում		1000
159	Էլեկտրական անջատիչների փոխարինում		1000
160	Վառոցքի մոմերի փոխարինում		2000
161	Կոնդիցիոների լիցքավորում		0
162	Կոնդիցիոների վերանորոգում		0
<b>11. Այլ ծառայություններ</b>			
163	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար		3000
164	Ավտոմեքենայի լվացում		2000
165	Անիվի հանում և տեղադրում		500
166	Անվաղողի վերանորոգում		1000
167	Անիվի բայանսավորում		1000
168	Անիվի վալց	դրամ	1000
169	CO-զողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար		1000
170	Խառատային աշխատանքներ		100
171	Փականագործի աշխատանքներ		8000
172	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար		500
<b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>			
<b>1.Շարժիչ</b>			
173	Շարժիչի բլոկ		100
174	Շարժիչի գլխիկ		100
175	Բարձիկ		6000
176	Շարժիչի գլխիկի միջադիր		3500
177	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ		8000
178	Շարժիչի բաշխիչ լիսեռ		100
179	Շարժիչի փական դուրս մղող		4000
180	Շարժիչի փական ներս մղող		4000
181	Շարժիչի փականի խցուկ		400
182	Ծնկաձև լիսեռ		100
183	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի		1000
184	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի		1500
185	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ		4000
186	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ		4000
187	Հենակային տափողակ		100
188	Մխոց		5000
189	Մխոցային օղակներ		16000
190	Ատամնանիվ		100
191	Ատամնավոր փոկ		0
192	Շղթա		8000
193	Հիդրոձգան		14000
194	Հրիչ		100
195	Հիդրոհրիչ		100
196	Բաշմակ		4000
197	Հանգստարար		4000
198	Թափանիվ		100
199	Թափանիվի պսակ		100
200	Խցուկ բաշխիչ լիսեռի		0
201	Շկիվ		100
202	Շարժաթև		100
203	Կարտերի միջադիր		100
204	Միջադիր		1000
<b>2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>			
205	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր		100

206	Յուղ շարժիչի կիսասինթետիկ,	1 լիտր	6000
207	Յուղ շարժիչի սինթետիկ,	1 լիտր	3500
208	Յուղի զտիչ		8000
209	Յուղի պոմպ		100
210	Յուղի պոմպի շարժաբեր		4000
211	Յուղի ռադիատոր		4000
212	Յուղի փողրակ		400
213	Յուղի ծորակ		100
214	Վառոցքի մոմ		1000
215	Բենզոլաք		1500
216	Խառնարակ		4000
217	Խառնարակի վերանորոգման հավաքածու		4000
218	Ինժեկտորի ֆորսունկա		100
219	Վառելանյութի մղիչ էլեկտրական		5000
220	Վառելանյութի մղիչ մեխանիկական		16000
221	Վառելանյութի զտիչ		100
222	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման		0
223	Վառելանյութի փողրակ		8000
224	Աքսելերատորի ճոպան		14000
225	Օդի զտիչ		100
226	Ջերմաստիճանային տվիչ		100
227	Յուղի տվիչ		4000
228	Բաշխիչ լիսեռի տվիչ		4000
229	Օդի ծախսի տվիչ		100
230	Արագաչափի տվիչ		100
231	Հովհարի տվիչ		0
232	Ջրի տվիչ		100
233	Բենզոլաքի տվիչ		100
234	Մարման ընթացքի կարգավորիչ		100
235	Մարման ընթացքի տվիչ		1000
236	Ղեկավարման համակարգիչ		100
237	Պարապ ընթացքի տվիչ		100
238	Դրոսելային փականի տվիչ		6000
239	Թթվածնի տվիչ		3500
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>			
240	Հովհարի փոկ		0
241	Հովհար		27000
242	Ռադիատոր		30000
243	Ընդարձակող բաք		5500
244	Ռադիատորի փողրակ		3000
245	Թերմոստատ		8500
246	Ջրի պոմպ		9000
247	Ջրի պոմպի առանցքակալ		100
248	Ջրի պոմպի թևակ		100
249	Սառեցման հեղուկ	1 լիտր	3000
250	Ջրի պոմպի տնանիվ		100
251	Հոլովակ		100
252	Փոկ		2000
253	Փոկ կոնդիցիոների		0
254	Ծորակ		100
255	Խլարարի ներդիր		500
256	Խլարարի կախոց		1200
257	Կրոնշտեյն		100
258	Անուր (խամուտ)		700
259	Խլարար		24000
260	Ռեզոնատոր		100
261	Վառարանի ռադիատոր		16000
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>			
262	Կցորդման բանվորական գլան		7000
263	Կցորդման գլխավոր գլան		9000
264	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու		100
265	Կցորդման տանող սկավառակ		12000

266	Կցորդման տարվող սկավառակ		21000
267	Կցորդման առանցքակալ		7000
268	Կցորդման փողորակ		2000
269	Փոխանցման տուփ		100
270	ՓՏ-ի առջևի խցուկ		1000
271	ՓՏ-ի հետևի խցուկ		1000
272	ՓՏ-ի առանցքակալ		6000
273	ՓՏ-ի առաջնային լիսեռ		100
274	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ		100
275	ՓՏ-ի եղանիկ		5000
276	ՓՏ-ի ատամնանիվ		15000
277	Համաժամիչ		4000
278	Մուֆտ		100
279	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ		2000
280	Տրանսմիսսիոն յուղ	1 լիտր	4000
281	ՓՏ-ի առաջնային լիսեռ		0
282	Հերմետիկ		3000
<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>			
283	Բաշխիչ տուփ		100
284	Բաշխիչ տուփի խցուկ		1000
285	Բաշխիչ տուփի առանցքակալ		5500
286	Բաշխիչ տուփի ատամնանիվ		15000
287	Բաշխիչ տուփի լիսեռ		100
288	Կարդանային լիսեռ		58000
289	Էլաստիկ մուֆտ		35000
290	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ		5000
291	Կարդանային լիսեռի խաչուկ		8000
<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>			
292	Հետևի կամ առջևի կամրջակ		100
293	Ռեդուկտոր		100
294	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ		100
295	Դիֆֆերենցիալ		100
296	Դիֆֆերենցիալի սատելլիտ		4000
297	Տանող ատամնանիվի խցուկ		1000
298	Տանող ատամնանիվի առանցքակալ		6000
299	Դիֆֆերենցիալի առանցքակալ		6000
300	Կիսասունի		15000
301	Կիսասունու առանցքակալ		5000
302	Կիսասունու միջադիր		500
303	Կիսասունու խցուկ		1000
304	Կարգավորիչ տափողակ		100
<b>7. Կախոց</b>			
305	Տրավերս		100
306	Կրոնշտեյն		100
307	Ձախ կամ աջ հողակապ		33000
308	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց		2500
309	Անվակունդ		16000
310	Անվակունդի խցուկ		800
311	Անվակունդի ներքին առանցքակալ		5000
312	Անվակունդի արտաքին առանցքակալ		5000
313	Ձախ կամ աջ հողակապի խցուկ		1000
314	Հարվածամեղմիչի թասակ		100
315	Ձսպանակ		100
316	Առջևի հարվածամեղմիչ		10000
317	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց		100
318	Հարվածամեղմիչի վռան		500
319	Ներքևի լծակ		100
320	Ներքևի լծակի վռան		2000
321	Վերևի լծակ		100
322	Վերևի լծակի վռան		2000
323	Գնդե հողակապ		6000
324	Առջևի կայունարար		100

325	Առջևի կայունարարի վրան		600
326	Առջևի կայունարարի առջևի վրան		600
327	Հետևի զսպանակ		100
328	Հետևի ցնցամեղմիչ		10000
329	Հետևի մետաղաձող (շտանգա)		6000
330	Հետևի մետաղաձողի (շտանգա) վրան		500
331	Հետևի անկյունագծային լծակ		100
332	Անկյունագծային լծակի վրան		100
333	Ջսպակ (ռեսսորա)	դրամ	0
334	Ջսպակի վրան		0
335	Ջսպակի միջադիր		0
336	Ջսպակի բռնիչ		0
337	Աջ կամ ձախ ձգան		5000
338	Ծայրակալ		5000
339	Ձգան մեջտեղի		10000
340	Անվահեծ		100
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>			
341	Ղեկային կայուն		45000
342	Ղեկային կայունի առանցքակալ		100
343	Ղեկային կայունի խաչուկ		100
344	Ղեկային ձող	դրամ	100
345	Ղեկային ձողի ծայրակալ		0
346	Ճոճանակ		8000
347	Ճոճանակի վրան		100
<b>9. Արգելակային համակարգ</b>			
348	Գլխ. գլան		12000
349	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ		100
350	Վակուումային ուժեղարար		100
351	Բանվ. գլան		6000
352	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ		100
353	Արգելակային փողրակ		3000
354	Սուպպորտի ուղղորդիչ		100
355	Սուպպորտի մանժետ		100
356	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	դրամ	5000
357	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ		10000
358	Առջևի արգելակային սկավառակ		16000
359	Հետևի արգելակային սկավառակ		0
360	Ձեռքի արգելակի ճոպան		6000
361	ABS-ի տվիչ		0
362	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ		2000
363	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ		100
364	Ձեռքի արգելակի ճոպան		0
<b>10. Էլեկտրասարքավորում</b>			
365	Գններատոր		100
366	Գններատորի դիողային կամրջակ		7500
367	Գններատորի ռեյե		4000
368	Գններատորի առանցքակալ		2500
369	Ստարտեր		47000
370	Ստարտերի ռեյե		4000
371	Ստարտերի ածուխ		4500
372	Բենդեքս		8000
373	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)		12000
374	Առջևի լապտեր		100
375	Առջևի թարթիչ		100
376	Հետևի լապտեր		100
377	Հետևի թարթիչ		100
378	Արգելակային լապտեր		500
379	Լամպ		6000
380	Էլեկտրական անջատիչ		3000
381	Էլեկտրական տվիչ		100
382	Էլեկտրական չափիչ սարք		100
383	Բոնկման կողպեք		12000

384	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	դրամ	50
385	Էլեկտրալարերի երկրորդային խուրց		50
386	Վառոցքային լարերի խուրց		11000
387	Վառոցքի մոմի ծայրակալ		0
388	Վազքաչափ		100
389	Վազքաչափի ճոպան		100
390	Արագաչափ		100
391	Ազդանշան		9000
392	Ապակեվազիչ		2500
393	Ապակեվազիչի շարժիչ		4000
394	Դռների կենտրոնական փական		3000
395	Ազդանշանային համակարգ		26000
396	Մագնիստոլա		100
397	Էլեկտրաամբարձիչ		100
398	Էլեկտրաամբարձիչի շարժիչ		100
399	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1ղ/մ վերանորոգման համար		100

Հ/հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափման միավոր	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների 2-րդ չափաբաժին Հունդայի Սոնատա մակնիշի ա/մ Գնացուցակ
1	2	3	4
	<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</b>		
1	Բռնկման համակարգի ստուգում	դրամ	0
2	Սառեցման համակարգի ստուգում		0
3	Յուղման համակարգի ստուգում		0
4	Արտազման համակարգի ստուգում		0
5	Կցորդման համակարգի ստուգում		0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում		0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում		0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում		0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում		0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում		0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում		0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում		0
13	ABS համակարգի ստուգում		0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում		5000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում		5000
16	Թափքի վիճակի ստուգում		0
17	Տարրեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում		0
	<b>SU-2 ներառվող ծառայությունների անվանումը</b>		
18	Շարժիչի հանում և տեղադրում		60000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում		100
20	Նույնը կոնդիցիոների դեպքում		100
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		100
22	Շարժիչի վերանորոգում		180000
23	Նույնը DOHC դեպքում		100
24	Նույնը V6-ի դեպքում		100
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում		6000
26	Բ/լիսեռի կախարիչի հանում և տեղադրում		100
27	Նույնը աջի համար (V6)		100
28	Նույնը ձախի համար (V6)		100
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում		40000
30	Նույնը աջի համար (V6)		100
31	Նույնը ձախի համար (V6)		100
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում		100
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում		40000
34	Փականի խցուկի փոխարինում		100
35	Նույնը V6-ի դեպքում		100

36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	դրամ	100
37	Նույնը V6-ի ձախի դեպքում		100
38	Նույնը V6-ի աջի դեպքում		100
39	Նույնը DOHC դեպքում		100
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում		5000
41	Հրիչների փոխարինում SOHC		5000
42	Նույնը DOHC դեպքում		100
43	Ատամնավոր փոկի փոխարինում		0
44	Նույնը DOHC դեպքում		0
45	Նույնը V6-ի դեպքում		0
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում		5000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում		100
48	Նույնը DOHC դեպքում		100
49	Նույնը կոնդիցիոների դեպքում		0
50	Նույնը V6-ի դեպքում		0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում		0
52	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում		8000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		100
54	Մխոցային օդակների փոխարինում		100
55	Նույնը DOHC դեպքում		100
56	Նույնը V6-ի դեպքում		100
57	Թափանիվի հանում և տեղադրում		100
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>			
58	Յուղի և յուղի գտիչի փոխարինում		500
59	Յուղի պոմպի փոխարինում		100
60	Նույնը DOHC դեպքում		100
61	Նույնը V6-ի դեպքում		100
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում		25000
63	Բռնկման կարգավորում		3000
64	CO կարգավորում		1000
65	Խարնարակի հանում և տեղադրում		0
66	Խարնարակի վերանորոգում		0
67	Օդի գտիչի փոխարինում	դրամ	1000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում		1000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում		5000
70	Բենզամղիչի փոխարինում		6000
71	Վառելիքի գտիչի փոխարինում		5000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում		10000
73	Տրամյուրի հանում և տեղադրում		100
74	Տրամյուրի վերանորոգում		100
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>			
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում		3000
76	Հովհարի հանում և տեղադրում		5000
77	Ռադիատորի հանում և տեղադրում		9000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում		100
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում		100
80	Ռադիատորի վերանորոգում		25000
81	Թերմոստատի փոխարինում		6000
82	Ջրի պոմպի փոխարինում	դրամ	18000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում		100
84	Նույնը կոնդիցիոների դեպքում		100
85	Ջրի պոմպի վերանորոգում		100
86	Նույնը DOHC դեպքում		100
87	Նույնը կոնդիցիոների դեպքում		100
88	Ընդարձակող բաքի փոխարինում		2000
89	Խլարարի հանում և տեղադրում		8000
90	Նույնը DOHC դեպքում		100
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում		2000
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>			
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում		3000
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում		5000
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում		9000

95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում		100
96	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում		100
97	ՓՏ-ի հանում և տեղադրում		25000
98	ՓՏ-ի վերանորոգում		6000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	դրամ	18000
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում		100
101	Վազքաչափի շարժաբերի փոխարինում		100
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում		100
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում		100
104	Նույնը V6-ի համար		100
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում		2000
106	Նույնը V6-ի համար		8000
107	ԱՓՏ-ի վերանորոգում		100
108	Նույնը V6-ի համար		2000
109	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում		10000
<b>5. Բաշխիչ տուփի, կարդանային լիսեռ</b>			
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում		0
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով		0
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	դրամ	0
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում		0
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.		0
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում		0
116	Կարդանային լիսեռի միջ. կախցի հանում և տեղադրում		0
<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>			
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում		0
118	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	դրամ	0
119	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում		0
120	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.		0
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում		0
<b>7. Կախց</b>			
122	Առջևի կախցի լիակատար քանդում և հավաքում		20000
123	Տրավերսի հանում և տեղադրում		1000
124	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում		6000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում		10000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար		0
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում		0
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար		0
129	Ձախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում		100
130	Ձախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում		100
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում		6000
132	Ջսպանակի հանում և տեղադրում		8000
133	Ջսպակի հանում և տեղադրում		0
134	Ջսպակի վռանների փոխարինում		0
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		9000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում		11000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում		8000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում		6000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում		7000
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	դրամ	0
141	Վերևի լծակի հանում և տեղադրում		11000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում		8000
143	Գնդե հողակալերի փոխարինում		5000
144	Ծայրականների հանում և տեղադրում		5000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում		100
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում		5000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում		100
148	Հետևի զսպանակի փոխարինում		9000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում		9000
150	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում		100
151	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում		100
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում		5000

153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում		100
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում		100
155	Անվաբացքի կարագավորում		5000
156	Ձողման աշխատանքներ 1 քառ.սմ համար		1000
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>			
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում		15000
158	Նույնը V6-ի համար		100
159	Ղեկային կալունի վերանորոգում		28000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում		100
161	ՂԿ-ի հողակալերի հանում և տեղադրում		100
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում		8000
163	Նույնը DOHC դեպքում	դրամ	100
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում		4000
165	Նույնը DOHC դեպքում		100
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում		6000
167	Նույնը DOHC դեպքում		100
168	Նույնը կոնդիցիոների դեպքում		100
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում		100
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում		100
<b>9. Արգելակային համակարգ</b>			
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում		6000
172	Գլխ. գլանի վերանորոգում		2000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում		10000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում		7000
175	Բանվ. գլանի վերանորոգում		1000
176	Արգելակային համակարգի օդահանում		3000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում		5000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում		5000
179	Առջևի սուպպորտի վերանորոգում		12000
180	Հետևի սուպպորտի վերանորոգում		12000
181	Արգելակային փողրակի փոխարինում		5000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում		5000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում		5000
184	Հետևի կոճղակների փոխարինում		0
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում		7000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում		8000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում		100
188	ABS-ի հանում և տեղադրում	դրամ	10000
189	ABS-ի վերանորոգում		25000
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում		12000
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում		8000
<b>10. Էլեկտրասարքավորում</b>			
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում		20000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում		10000
194	Գններատորի հանում և տեղադրում		6000
195	Նույնը V6-ի դեպքում		100
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում		100
197	Գններատորի վերանորոգում		6000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում		6000
199	Մեկնարկիչի վերանորոգում		6000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում		4000
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	դրամ	5000
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում		5000
203	Վազքաչափի հանում և տեղադրում		1000
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում		6000
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում		40000
206	Արագաչափի հանում և տեղադրում		6000
207	Ազդանշանի հանում և տեղադրում		4000
208	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում		5000
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում		6000
210	Ազդանշանային համակարգի տեղադրում		22000

211	Մագնիտոլայի տեղադրում		5000
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում		2000
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում		20000
214	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում		100
215	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում		100
216	Էլեկտրական տվիչների փոխարինում		1000
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում		1000
218	Վառոցքի մոմերի փոխարինում		2000
219	Կոնդիցիոների լիցքավորում		25000
220	Կոնդիցիոների վերանորոգում		5000
<b>11. Այլ ծառայություններ</b>			
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	դրամ	2000
222	Ավտոմեքենայի լվացում		2000
223	Անիվի հանում և տեղադրում		500
224	Անվաղողի վերանորոգում		1000
225	Անիվի բայանսավորում		1000
226	Անիվի վալց		6000
227	CO-զողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար		1000
228	Խառատային աշխատանքներ		100
229	Փականագործի աշխատանքներ		8000
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար		300
<b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>			
<b>1.Շարժիչ</b>			
231	Շարժիչի բլոկ	դրամ	100
232	Շարժիչի գլխիկ		100
233	Բարձիկ		75000
234	Շարժիչի գլխիկի միջադիր		35000
235	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ		105000
